



## 60. ԽՐԵՂԵՆ ԵԶԱՆԵՐ

Մեկ խոտաղըմ կեղի: Կերթա, մեկ իրիկ ու կընգա՞մ տուն խոտաղ կեղի:

Ետա մարթն կէլնի, կերթա կարիբութեն:

Կասա. - Խոտաղ, իմ կընիկ, իմ էրկու եզ քյե թասլիմ, աչկ պախես վերեն, չուր ես գամ:

Մարթ օր գյընաց, կընիկ բալեն էտուր էտա խոտաղ:

Ասաց. - Տը գաս, եղիս ընծի սիրական:

Ենքան կէնա, խոտաղ ուրին ծեռ չիտա:

Կասա. - Ետպես պան չեղի, ես քիւ խոտաղն իմ:

Կէլի, կերթա եզներու հառեճ, ուրին կը լա:

Կասա. - Վարտան ախապեր, հե՞ր քյի կը լաս: Ելի՛, լիւծ տի՛ մե վըգին, մե լըծա:

Կէլի, լիւծ կը տընա եզներու վըգին, կը լըծա, կերթա մեկ օտար գյեղ: Յիրիկուն ռես կը գա, բալեն գիսոտաղ կը տա:

Կասա. - Վարտան ախապեր, քիւ էրկու եզ տը տաս ծի:

Կասա. - Ես իմ էրկու եզ չը՛մ իտար քյի:

Կասա. - Զի մեկ մարաքըմ դարման կա, թի քիւ եզներ չըկերան, քիւ եզներ՝ ծի, թի կերան, խազար տրամ քյեզի կը տամ:

Կասա. - Դե քիւ մարքյի տիւր պա՛ց, իմ եզներ մըլա հինե:

Ետա ռեսն էլ կը խնդանա, կասա. - Խըլիսուն Վարտան ախապոր եզներ խասի ծի:

Կես գիշերին եզներ կը բիռան, մեկ խազար խատ խրեղեն եզ կը գան, չուր հետին կը գա, դարման կը խըլըսի, չըխասի:

Մեկ խազար խատ օսկի Վարտան ախապեր առավ ուրիշ խըլխուն: Ելավ, ուր եզներ լըծեց, խեժավ, գյընաց: Գյընաց մեկ զատն էրկիրըմ, եթալ:

Էտա գյեղի մեծավոր էկավ հառեց:

Ասաց. - Վարտան ախապեր, քիւ եզներ ս' ի՞ տար ծիկ:

Ասաց. - Չէ, չը՞ն իտար:

Ասաց. - Քառսուն քյիլու եկամուտ ունեմ, մեկ արտ: Թի քիւ եզներ չուր խըլխուն ցանեցին, քիւ եզներ չըխո քյիկ, թի չըցանեցին, քիւ եզներ քյենե կառիմ:

Ասաց. - Քիւ քառսուն քյիլա սերմ տա՛ր ընտեղ: Քիւ խարորդ էլ տա՛ր ընտեղ:

Ասին. - Վարտան ախապեր, տէւ նըստի՛ր, մենք կերթանք արտ:

Եզներ գացին արտ, բիոացին, մեկ խազար խատ խրեղեն եզ էկան, չուր հետին էկավ, հառած ցանեց, մոտեն էլավ:

Խըլխուն ռես էկավ, օր արտ ցանուկ, ցաքիւկ, մոտեն էլիւկ:

Դիրիս Վարտան ախապեր եզներ լըծեց, խեժավ, գյընաց: Գյընաց մեկ էրկիր մ' էլ:

Էտա գյեղի մեծավոր էկավ, էն էլ աչ էտիր եզներուն:

Ասաց. - Վարտան ախապեր, քիւ եզներ տը տաս ծիկ: Մեկ խատ արաքա իմ տան թաջանաթ կը լըցեմ վերեն, իմ ախչիկն էլ կը տնեմ վերեն, կը տնեմ մըչ չամուռին, դիրիս թի քիւ եզներ քաշեցին տէւս, այտա մալ, այտա ախչիկ քյեզի: Թի չըքաշեցին տէւս, քիւ էրկու եզ ընձի:

Դիրիս եզներ գացին, լըծվան իինե: Բիոացին, քառսուն խատ խրեղեն եզ էկան:

Այտա արաքեն քաշեցին, ասին, կուրուսան: Էկավ ուր տուն Վարտան ախապեր: Էկավ, կարգյվավ: Մեկ մուղղարըմ էնիկ, ուր կընիկ խըտ իրարու քաշեցին:

Դիրիս էտա կընիկ էղավ ռեսի տըղին սիրական: Այտա մարքն էրթեր հօղեն, էնի ու ռեսի տըղեն բաս կը պըօնեն: Դիրիս էտա էրկու եզ ճիշցան:

Ասաց. - Վարտան ախապեր, մեզի մորթա՛, - ասաց, - միս կուտես, մեր օսկըռեր համա չըքալես, կը տանես, կը ցանես քիւ արտի մեջ: Կեղի քի բաղ, կեղի քի բախչա:

Ենքան բախչա եղավ, օր մեկ Աստղընու ծոցի խընձոր եղավ այտա բախչի մեջ: Ենի ու ռեսի տըղեն նըստան հոդի մեջ, բաս պըռնեցին:

Ենքան երաց ետա ռեսի տըղեն, Վարտան ախապոր բախչի քիքյն չէխան: Իրեք օրով նըստավ, չըկառցավ բախչի քիքյն խաներ: Էլավ, էկավ Վարտան ախապոր կընգան մոտ:

Ասաց. - Ախչի՛, քჩւ իրկան զրիւցա՛, խի՛ ենոր բախչի քիքյն ի՞նչ ա:

Վարտան ասաց. - Կընի՛կ, իս քյեզի չըմ ասեր իմ բախչի քիքյ:

Ասաց. - Օր տիւ ծի չասես, համա քյեզի կընգնութեն չըմ եներ:

Ասաց. - Դե տիւ էլի՛ր, մըտի՛ր թոնիր, ես քյե թորվան ակվե քըսա էնեն, մարթ չըլսա:

Մեկել եօր գյիշեր ռեսի տըղին քըսա երաց:

Ասաց. - Գյիտնա՞ս, ենոր բախչի քիքյ ի՞նչ ա: Վարտան ախապեր ուր եզներ մորթեց, միս կերավ, օսկըռներ չերալ, տարավ ցանեց, եղավ ուրին բախչին, այտա Վարտան ախապոր բախչի քիքյ:

Խըլիսուն էլավ, գյընաց հոդեն:

Ասաց. - Վարտան ախսեր, թի ես քչւ բախչի քիքյ խանի, քչւ բախչեն ծի, թի չըխանի, իմ մալ, իմ թաջանաթ՝ քյիկ, իմ խոգյին՝ քյիկ, իմ կընիկ՝ քյիկ:

Ասաց. - Ոնսի՛ տըղա, դի ասա՛, իմ բախչի քիքյ ի՞նչ ա:

Ասաց. - Քչւ եզներու օսկըռներն ա:

Էլավ, բախչեն Վարտան ախապոր մոտեն առավ, ծեռ ետիր ուր ծոց, էկավ տուն: Ենոր խաց կերավ, ենոր խագիւստ առավ, կընիկ ասաց. - Վարտան ախսեր, դո՞ր տ'երթաս:

Ասաց. - Տ'յյամ մըտ Ֆալաք՝ գանգատ:

Գյընաց մեկ գյեղըմ: Մեկ ախչիկ մ' ենոր ռաստ էկավ:

Ասաց. - Վարտան ախսեր, դո՞ր տ'երթաս:

Ասաց. - Տ'յյամ մըտ Ֆալաք՝ գանգատ:

Ասաց. - Ամլա խորոտ, ես ամլա սիրուն, ծի հե՞ր չըմ տանե, իմ գանգատն էլ Ֆալաքին երա՛:

Գյընաց մեկ գյետի պերան: Գյետ ենոր խարցընեց:

Ասաց. - Վարտան ախսեր, տիւ դո՞ր տ'երթաս:

Ասաց. - Տ'իյամ մըտ Ֆալաք՝ գանգատ:

Ասաց. - Ես ամլա հիստոկ, իե՞ր իմ ճռւր չըն խըմեր: Վարտան ախպեր, իմ գանգատն էլ էրա:

Էլավ, թորկեց, գյընաց: Գյընաց, գյընաց մեկ բախչի՞մ մեչ: Մեկ ծերացո՞ւկ խալիվորըմ գի նըստե այտա տեղ: Մեկ ծառըմ կը կըտրա, մեկ տունգըմ կը ճըրա: Ըն տունգ կը կանցընա:

Կասա. - Պապիկ, տիւ ի՞նչ մարթ ես:

Կասա. - Յա՞յ, որտի՞, ես Ֆալաքին եմ:

Կասա. - Պապիկ, տիւ քիւ Աստըված կը սիրես, ենա ծառ իե՞ր կը կըտրես:

Կասա. - Որտի՞, ենի են ա, ինչ կը մեռի:

Կասա. - Ենա մեկէ իե՞ր կը ճըրես:

Կասա. - Ենի են ա, օր ուր մորեն կը ծընանի, - կասա, - որտի՞, տիւ ի՞նչ հապով ես էկե ըստա:

Կասա. - Պապիկ, ես էկեր եմ քիւ մոտ գանգատ, - կասա, - ձի էրկու եզ կեր: Այնոնց միս կերա: Յայնոր օսկըռներ ցանեցի, եղավ ձի մեկ բախչե՞մ:

Ասաց. - Քիւ բախչի մեչ ի՞նչ խընծոր կեր:

Ասաց. - Խընծոր կեր, ամախութնի խընծոր: Մեռել ուտեր, կը հարեր: Ուսի տըղեն ու ես վըր իմ բախչին բաս ենք պըռնիր, հիսնե առեր ա: Մեկ ախչիկըմ կեր մեր գյեղ, ասաց՝ տիւ օր կերթաս մըտ Ֆալաք, իմ գանգատն էլ էրա, ասաց, ես ամլա խորոտ, ամլա սիրուն, ձի իե՞ր չըն տանիր:

Ասաց. - Խըլիսուն էտա ախչիկ կէլի, ճռւր աղոթրան կը թափա, օր շռա, աղոթրան կը շռա, դիւց գէնի չըն տանիր:

Ասաց. - Ֆալաք, ես գյետի գանգատ էլ քյե տ'ենեմ: Մեկ լավ, հիստակ գյետըմ կեր, օր էնու ճռւր ըսկի չըն խմե:

Ասաց. - Կերթաս, էտա գյետ կընցիս, դիրիս գյետ, օր քյե կը խարցնա, ասա՝ չուր մարթըմ չը տանիս, քիւ ճռւր չըն խմեր:

Դիրիս ասաց. - Իմ գանգատ ի՞նչըլս տ'եղի:

Ասաց. - Տըղեն, տիւ գյընա՛ տուն, կերթաս, ռեսի տըղի խետ բաս կը պըռնես: Ասա՝ ռեսի տըղեն՝ արեգակ դո՞րվե կէլի: Ենի քյեզի տ'ասա՝ արեգակ հարեվելվե կէլի: Տիւ ենոր ասա՝ հարեվմուտվե կէլի: Յեն օր, օր տիւ կը խասիս տուն, ես արեգակ հարեվմուտվեր կը խանեմ: Դիրիս տիւ գյընա՛, ռեսի տըղի խետ բան պըռնա, ռեսի տըղեն կը տանիս:

Կը գա գյետի մոտ, գյետ կընցի:

Կասա. - Վարտան ախաբեր, տիւ իմ գանգատ էրի՞ր:

Կասա. - Խա՛, էրի՞: Ֆալաք կասա՝ չուր մարթըմ չըտանի,  
Ենոր ճիւր չըն խըմեր:

Ասաց. - Դա՛յ, քիւ պերան կոտրի, տիւ ընչի՞ շուտ չասիր:

Եկավ ախչկե մոտ:

Ասաց. - Վարտան ախաբեր, տիւ իմ գանգատ էրի՞ր:

Ասաց. - Խա՛, էրի՞: ճիւր աղոթրան մը՛ թափեր: Խըլիսուն  
կելիս, աղոթրան մը՛ շոիր, դիրիս քյե կը տանին:

Եկավ, եկավ տուն: Խըլիսուն էլան, ենի, ռեսի տըղեն կանան  
տանիս:

Ասաց. - Ռեսի տըղա, հեսօր արեգակ հարեվմուտվե տ'եղի:

Ասաց. - Չէ՛, հարեվելվե տ'եղի:

Դիրիս ասաց. - Ես ու տիւ մեկ բան տը պըռնինք: Թի օր  
արեգակ հարեվելվեր եղավ, չըխտ իմ բար, բախչեն քյիկ ա, իմ  
տուն, կընիկն էլ քյե եղի, թի օր հարեվմուտվեր էլավ, չըխտ իմ  
բախչեն ետ կը տա:

Ռեսի տըղեն ասաց. - Խա՛, այտապես թըխ եղի:

Կասա. - Դե՛, էլի՞, ես ու տիւ կանենք տանիս:

Դիրիս արեգակ հարեվմուտվեր էլավ: Գյընաց, հարեվել ըն-  
գավ:

Վարտան ախաբեր ուր բախչեն, ուր կընիկ առավ: Գյընաց,  
Ենոր կընիկ կապեց ձիու պոչ: Տարավ չոլվեր, դաշտվեր: Մեկ մա-  
զեր էպեր տուն կընգան:

